

ՓՐՈՖԵՍՈՐ ՎԱՐՍԵՆ ԱՂԱԲԵԿԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԿԾ Է ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Posted on April 2, 2024 by Keghart



Category: [Opinions](#)



Լրատու, 29 մարտ 2024

Պատմաբան, մարդու իրաւունքներու պաշտպան, կառավարման եւ քաղաքականութեան խորհրդատու փրոֆեսոր Վարսեն Աղաբեկեան նշանակուած է Պաղեստինեան Իշխանութեան արտաքին գործոց եւ արտագաղթողներու հարցերով պետական նախարար: Իր աշխատանքային յառաջխաղացման ընթացքին ան ղեկավար դեր խաղցած է պաղեստինահայ գաղութին մէջ:

Աղաբեկեան եղած է հասարակական կազմակերպութիւններու հիմնադիր անդամ եւ Պաղեստինի Եկեղեցական գործերու նախագահական բարձրագոյն կոմիտէի անդամ: Ան աշխատած է համալսարաններու խորհուրդներու եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններու մէջ, եղած է Պաղեստինի մարդու իրաւունքներու անկախ յանձնաժողովի գլխաւոր յանձնակատարը:

Բացի այս բոլորէն, ան եղած է Բեթղեհեմի Սուրբ Ծննդեան տաճարի վերականգնման նախագահական կոմիտէի անդամ:

2021 թուականին Աղաբեկեան հեղինակած է «[Պաղեստինահայ մը](#)» (A Palestinian Armenian) հատորը՝ Սուրբ Տեղեաց հայոց 1600-ամեայ պատմութիւնը: 2023-ին յաջորդեց «[Գոյատեւման պատումը](#)» (The Saga of Survival: Armenian Palestinians, the British Mandate and the Nakba) հատորը պաղեստինահայոց ժամանակակից պատմութեան մասին: Այս մենագրութեան մէջ դոկտոր Աղաբեկեան յատուկ ուշադրութիւն դարձուցած է պաղեստինեան Նաքպային (արաբերէն՝ «աղետ») ու հայոց վրայ անոր ազդեցութեան: «Նաքպա» բառը 1948-ին Պաղեստինի գրաւման առաջին փուլն ու պաղեստինցիներու առաջին զանգուածային տարագրութիւնը բնորոշող եզրն է արաբական աշխարհին մէջ:

Վարսեն Աղաբեկեան երրորդ հայն է, որ բարձր պաշտօնի կը կոչուի Պաղեստինեան Իշխանութեան (ՊԻ) կողմէ: Մանուէլ Հասսասեան եղած է ՊԻ-ի դեսպանը Միացեալ Թագաւորութեան եւ Դանիայի Թագաւորութեան մէջ, իսկ պատմաբան [Ալպերթ Աղազարեան](#) զբաղցուցած է ՊԻ-ի քաղաքական խօսնակի պաշտօնը:

Ի յաւելումն պատմութեան մասին իր երկու գիրքերուն, Աղաբեկեան գրած է բազմաթիւ ձեռնարկներ, յօդուածներ եւ ազգային զեկոյցներ Երուսաղեմի, կրթութեան, առողջապահութեան, երիտասարդութեան եւ կանանց խնդիրներու վերաբերեալ:

Արտաքին գործոց նոր նախարարն ունի երկու զաւակ եւ երկու թոռ:

There are no comments yet.